600.0288.31.07.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2019 թվականի №288Ա

ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), համաձայն իր 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ հաստատված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի, իրականացրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից 2018 թվականի 3-րդ եռամսյակում կայացած A-608-18 ծածկագրով «Ծրագրային փաթեթների օգտագործման լիցենզիաներ», A-594-18 ծածկագրով «35 կՎ ՕՍԲ ուժային մալուխ 3*150» և 4-րդ եռամսյակում կայացած A-692-18 ծածկագրով «Տրանսֆորմատորային յուղ» գործարքների (այսուհետ՝ Գործարքներ) մոնիթորինգ, որի արդյունքում պարզվել է, որ Գործարքները Ընկերության 2018 թվականի տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանում (այսուհետ՝ Գնումների պլան) նախատեսված չեն եղել,

բ) 2019 թվականի հունիսի 12-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ սահմանված հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջների (այսուհետ՝ Լրացուցիչ պահանջներ) 7-րդ և 13-րդ կետերով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի ժամկետը երկու անգամ 10-ական օրով երկարաձգվել է,

գ) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2019 թվականի ապրիլի 3-ի №114-19, հունիսի 20-ի №236-18, հուլիսի 18-ի №269-19 և հուլիսի 23-ի №276-19 գրություններով և սույն թվականի հուլիսի 8-ին Հանձնաժողովում կայացած քննարկման ընթացքում, Լրացուցիչ պահանջների 7-րդ կետի համաձայն, ներկայացրել է համապատասխան շուկայի ուսումնասիրության արդյունքները և պարզաբանումներ, որոնց համաձայն՝ ծրագրային փաթեթների օգտագործման լիցենզիաների ձեռքբերման գործարքը Գնումների պլանում գնումն իրականացնելու պահին նախատեսված չի եղել, սակայն հետագայում ներառվել է Գնումների պլանի լրամշակված տարբերակում, 35 կՎ ՕՍԲ 3*150 ուժային մալուխի ձեռք բերման գործարքը նախատեսված է եղել առաջին եռամսյակում, ինչը Գնումների պլանի լրամշակված տարբերակում չի ներառվել: Հետագայում, Գնման առարկայի ձեռքբերման անհրաժեշտությունից ելնելով, նշված գնման առարկայի ձեռքբերումը կրկին ներառվել է Գնումների պլանում: Տրանսֆորմատորային յուղի ձեռքբերման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել կառուցվող բարձր լարման ենթակայանների շահագործումն ապահովելու նպատակով և Գնումների պլանում նշված գործարքը չներառելը պայմանավորված է վերոնշյալ ենթակայանների շահագործման հանձնումը 2018 թվականին նախատեսված չլինելով,

դ) Լրացուցիչ պահանջների 7-րդ կետի համաձայն՝ գնումների կատարման ընթացակարգերը պետք է հիմնված լինեն գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքի ապահովման վրա,

ե) Լրացուցիչ պահանջների 7.1-րդ կետի համաձայն՝ հանրային կազմակերպության կողմից գնումը կատարվում է, երբ այն նախատեսված է տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանով,

զ) Լրացուցիչ պահանջների 13-րդ կետի համաձայն՝ փոփոխությունների դեպքում Գնումների պլանի լրամշակված տարբերակը ենթակա է վերահրապարակման հինգ աշխատանքային օրվա ընթացքում,

է) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Լրացուցիչ պահանջների 7.1-րդ և 13-րդ կետերը՝ գնումն իրականացնելով առանց Գնումների պլանում նախատեսելու և փոփոխությունների դեպքում գնումների պլանի լրամշակված տարբերակը

սահմանված կարգով վերահրապարակելու, իսկ Լրացուցիչ պահանջների 7-րդ կետով սահմանված պահանջը չի խախտվել,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լրացուցիչ պահանջների 7.1-րդ և 13-րդ կետերի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
31 հուլիսի 2019թ.